# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«19» նոյեմբերի 2022 թվականի N 622-Ա քաղաք Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 218-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-4-րդ մասերի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հուլիսի 23-ի N 213-Ա և 2013 թվականի հունվարի 14-ի N 04-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 218-Ա որոշման վերնագրում «մարզի բնակչության» բառերը փոխարինել «մարզային» բառով.

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հուլիսի 23-ի N 213-Ա և 2013 թվականի հունվարի 14-ի N 04-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 218-Ա որոշման N 1, N 2 և N 3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1, N 2 և N 3 հավելվածների:

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2022 թվականի
նոյեմբերի 18-ի N622-Ա որոշման

«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2013 թվականի
սեպտեմբերի 3-ի N 218-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ (ոլորտը համակարգող), հանձնաժողովի նախագահ,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,

Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ, հանձնաժողովի անդամ,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, հանձնաժողովի անդամ,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի անդամ,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, հանձնաժողովի անդամ,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, հանձնաժողովի անդամ,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քարտուղարության պետ, հանձնաժողովի քարտուղար:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2022 թվականի
նոյեմբերի 18-ի N 622-Ա որոշման

«Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2013 թվականի
սեպտեմբերի 3-ի N 218-Ա որոշման

ԿԱԶՄԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

**1. Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների դուրս բերման և հաշվառման խումբ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ, խմբի ղեկավար.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.6-Մ2-1), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.6-Մ2-2), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.6-Մ2-3), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 98-1.4-Մ4-1), խմբի անդամ:

**2. Անվտանգ գոտում բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման և հաշվառման խումբ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ, խմբի ղեկավար.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.4-Մ2-1), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.4-Մ2-2), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.4-Մ2-4), խմբի անդամ:

**3. Տրանսպորտային ապահովման խումբ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, խմբի ղեկավար.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ (98-1.2-Մ2-2), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.2-Մ2-3), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.2-Մ2-4), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 98-1.2-Մ4-1), խմբի անդամ:

**4. Սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ, խմբի ղեկավար.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.1-Մ2-1), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.1-Մ2-2), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 98-1.1-Մ4-1), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 98-1.1-Մ4-2), խմբի անդամ:

**5. Բժշկական հաստատությունների անձնակազմերի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման հաշվառման խումբ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, խմբի ղեկավար.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 98-1.5-Մ2-1), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 98-1.5-Մ4-1), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 98-1.5-Մ4-2), խմբի անդամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի մասնագետ (ծածկագիր՝ 98-1.5-Մ6-1), խմբի անդամ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2022 թվականի
նոյեմբերի 18-ի N 6224 որոշման

«Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2013 թվականի
սեպտեմբերի 3-ի N 218-Ա որոշման

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## ԳԼՈՒԽ 1
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կանոնադրությունը սահմանում է խաղաղ պայմաններում արտակարգ իրավիճակների ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ հանձաժողովի հիմնական խնդիրները, իրավասություններն ու աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

**2.** Հանձնաժողովը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ)՝ որոշմամբ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների, կազմակերպությունների տարահանման միջոցառումները պլանավորելու, կազմակերպելու և համակարգելու նպատակով:

**3.** Հանձնաժողովի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Մարզպետը: Հանձնաժողովի անմիջական ղեկավարումը, որպես հանձնաժողովի նախագահ, Մարզպետի որոշմամբ դրվում է համապատասխան ոլորտը համակարգող Մարզպետի տեղակալի վրա:

**4.** Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 824-Ն որոշումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

**5.** Հանձնաժողովը համագործակցում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի (այսուհետ՝ Մարզ) տարածքում ստեղծված բոլոր տարահանման մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ, որն իրականացնում է հանձնաժողովի գործունեության կազմակերպամեթոդական ապահովումը:

6. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է հանձնաժողովի տարեկան աշխատանքային պլանի հիման վրա: Հանձնաժողովի նիստերը գումարվում են յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ի մասնակցությամբ, իսկ քվեարկությունը համարվում է կայացած մասնակիցների ձայների պարզ մեծամասնության դեպքում: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Հանձնաժողովի անդամի գործունեությունը դադարեցվում է նիստերին երկու անգամ անհարգելի բացակայելու դեպքում: Անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել արտահերթ նիստեր:

## ԳԼՈՒԽ 2
## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**7. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝**

1) ամենօրյա գործունեության ընթացքում՝

ա. Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ համատեղ ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակների ծագման ու սպառնալիքի դեպքում բնակչության տարահանման պլանի մշակում և տարին մեկ անգամ ճշգրտում,

բ. տարահանման մարմինների ստեղծման, համալրման և նախապատրաստման վերահսկողություն,

գ. բնակչության, նյութական և մշակութային արժեքների վտանգավոր տարածքներից տարահանման, տեղաբաշխման և ապահովման միջոցառումների պլանավորումը,

դ. տարահանվող բնակչության տեղաբաշխման վայրերի նախապատրաստման և տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանների մշակման և նախատեսված միջոցառումների իրականացման աշխատանքների համակարգումը,

ե. հանձնաժողովի նիստերում տարահանման միջոցառումների, պլանների և տարահանման մարմինների պատրաստականության վերաբերյալ հարցերի քննարկումը,

զ. զինվորական հրամանատարության հետ տարահանման միջոցառումների պլանավորման և ապահովման փոխգործողությունների իրականացումը.

2) քաղաքացիական պաշտպանության համակարգը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման ժամանակ՝

ա. բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանների ճշգրտման կազմակերպումը,

բ. անվտանգ տարածքներում տարահանվող բնակչության կենսաապահովման առաջնային միջոցառումների ճշգրտումը,

գ. տարահանման մարմինների ծավալման միջոցառումների և նրանց պատրաստականության վիճակի վերահսկումը,

դ. քաղաքացիական պաշտպանության մարզային տրանսպորտային ծառայության հետ միասին տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովման համար առանձնացված բոլոր տեսակների տրանսպորտային միջոցների օգտագործման կարգի ճշգրտումը,

ե. տարահանման միջոցառումների ապահովման նախապատրաստման ընթացքի նկատմամբ հսկողության իրականացումը.

3) տարահանման վերաբերյալ կարգադրություն ստանալուց հետո՝

ա. համայնքային տարահանման հանձնաժողովների ու քաղաքացիական պաշտպանության մարզային տրանսպորտային ծառայության հետ կայուն կապի պահպանումը,

բ. բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացումը՝ ելնելով իրավիճակից,

գ. Մարզի տարածքում ձևավորված տարահանման հանձնաժողովների գործունեության համակարգումը,

դ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման և Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության հետ փոխգործողությունների կազմակերպումը բնակչության տարահանման միջոցառումների իրականացման ուղղությամբ,

ե. բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման ընթացքի վերաբերյալ տվյալների հավաքումը, ամփոփումը և Մարզպետին ներկայացնելը:

**8. Հանձնաժողովի իրավասություններն են՝**

1) տարահանման համայնքային հանձնաժողովների նախագահների խորհրդակցություններ անցկացնելը,

2) Մարզի տարածքում ձևավորված բոլոր տարահանման հանձնաժողովների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելը՝ տարահանման միջոցառումների պլանավորման և նախապատրաստման ուղղությամբ:

## ԳԼՈՒԽ 3

## ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**9. Տարահանման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքում ընդգրկվում են՝**

1) տարահանման հանձնաժողովի ղեկավար կազմը,
2) վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների դուրս բերման և հաշվառման աշխատանքային խումբը,
3) անվտանգ գոտում բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման և հաշվառման աշխատանքային խումբը,
4) տրանսպորտային ապահովման աշխատանքային խումբը,
5) սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման աշխատանքային խումբը,
6) բժշկական հաստատությունների անձնակազմերի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման հաշվառման աշխատանքային խումբը:

## ԳԼՈՒԽ 4

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

**10.** Հանձնաժողովն իր աշխատանքները ռազմական դրություն հայտարարելու և արտակարգ իրավիճակների ժամանակ կազմակերպում է նիստերի ձևով, որոնք գումարվում են, ինչպես հանձնաժողովի նախագահի, այնպես էլ հանձնաժողովի

անդամների 1/3-ի նախաձեռնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

**11.** Հանձնաժողովի նախագահը՝

1) ենթարկվում է Մարզպետին և հանդիսանում է հանձնաժողովի անդամների անմիջական ղեկավարը, նրա իրավասության սահմաններում ընդունված որոշումները (հրահանգները) ենթակա են կատարման հանձնաժողովի անդամների կողմից.

2) պատասխանատու է ռազմական դրության և արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման միջոցառումների պլանավորման և իրականացման համար.

3) սահմանում է հանձնաժողովի նախագահի տեղակալի և հանձնաժողովի անդամների պարտականությունները.

4) խաղաղ ժամանակ՝

ա. կազմակերպում և հսկողություն է իրականացնում բնակչության տարահանման պլանավորման փաստաթղթերի մշակման և ժամանակին ճշգրտման նկատմամբ,

բ. հսկողություն է իրականացնում տարահանված բնակչության տեղավորման և առաջնահերթ ապահովման պատրաստության նկատմամբ,

գ. ապահովում է տարահանման միջոցառումների պլանավորման փոխգործողությունների իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

5) քաղաքացիական պաշտպանության համակարգը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման ժամանակ՝

ա. հսկողություն է իրականացնում տարահանման մարմինների պատրաստականության բերման միջոցառումների կատարման նկատմամբ,

բ. ելնելով իրավիճակից հրավիրում է հանձնաժողովի նիստեր տարահանման միջոցառումների պլանավորման, իրականացման և ապահովման հարցերով.

6) տարահանման վերաբերյալ որոշում ստանալուց հետո՝

ա. ղեկավարում է տարահանման մարմինների գործունեությունը տարահանվող բնակչության ազդարարման, հավաքի և անվտանգ տարածքներ տեղափոխման ուղղությամբ,

բ. հսկողություն է իրականացնում տարահանման ընթացքի, տվյալների հավաքագրման գործընթացի նկատմամբ:

**12.** Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարում է հանձնաժողովի նախագահի տեղակալը:

**13.** Հանձնաժողովի քարտուղարը՝

1) իր գործունեությունն իրականացնում է հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ,

2) խաղաղ ժամանակ՝

ա. Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ համագործակցելով՝ մշակում է հանձնաժողովի տարեկան աշխատանքային պլանները և ներկայացնում հանձնաժողովի նախագահի հաստատմանը,

բ. իրականացնում է հանձնաժողովի անդամների հավաք,

գ. վարում է նիստերի արձանագրությունները,

դ. ճշտում է հանձնաժողովի անհատական կազմը՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնում առաջարկություններ հանձնաժողովի անդամների փոփոխման վերաբերյալ,

ե. ապահովում է նիստերում ընդունված որոշումների առաքումը կատարողներին և վերահսկում դրանց կատարման ընթացքը.

3) քաղաքացիական պաշտպանության համակարգը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման ժամանակ՝

ա. իրականացնում է հանձնաժողովի անդամների ազդարարումը և հետևում է հավաքի ընթացքին,

բ. կազմակերպում է հերթապահություն,

գ. մշակում է զեկույցների, հաշվետվությունների, հաղորդագրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

4) տարահանման վերաբերյալ կարգադրություն ստանալուց հետո՝

ա. նախապատրաստում է բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր և անհրաժեշտության դեպքում տրամադրում հանձնաժողովի անդամներին,

բ. կազմակերպում է տարահանման միջոցառումների ընթացքի վերաբերյալ զեկույցների և տեղեկատվության հավաքագրում և հաշվառում,

գ. ընդհանրացնում է ստացված տեղեկատվությունը, նախապատրաստում է հանձնաժողովի զեկույցները.

5) հանձնաժողովի անդամների՝ աշխատատեղեր (հավաքի հաստատված վայրեր) ժամանելու համար սահմանվում են ժամկետներ՝

ա) աշխատանքային ժամին՝ 30 րոպե,

բ) ոչ աշխատանքային ժամին՝ 1ժամ 30րոպե (ձմեռային ժամանակ՝ 2 ժամ):»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է